ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 27 » « հոկտեմբերի » 2021թ.**

ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մխիթարյան

Հանձնաժողովի անդամներ՝

Մ.Այդինյան

Գ.Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Զոհրաբյան

1. «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացրած հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ տեղեկություններ

1.1. «Բարսիս» ՍՊ ընկերությունը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը՝ ներկայացրել է հրավերի պահանջներին համապատասխան՝ Հավելված N 1.2-ը իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ գլխամասում գրված՝ «Հավելված N 1.2 ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի» գրառումը՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը շտկված:

2. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

2.1. «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով մրցույթի մասնակցի ներկայացված գնային առաջարկի արդյունքում չափաբաժիններ 2-ով և 3-ով առաջին տեղ զբաղեցնող ճանաչել «Բարսիս» ՍՊԸ-ին:

3. Հանձնաժողովը որոշեց՝

(Ա.Մխիթարյան)

3.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով մրցույթի չափաբաժիններ 2-ով և 3-ով հաղթող ճանաչել «Բարսիս» ՍՊԸ-ին:

3.2. Պայմանագրի կնքման նպատակով «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակցին անգործության ժամկետի ավարտից հետո՝ ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի կամ կանխիկ փողի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով, որը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ և որակավորման ապահովման տուժանքի կամ կանխիկ փողի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 15 տոկոսի չափով, որը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուից կողմից ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ:

3.3. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

3.4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Հանձնաժողովի նախագահ՝

_____ Ա.Մխիթարյան

Հանձնաժողովի անդամներ՝

_____ Մ.Այդինյան

_____ Գ.Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար՝

_____ Լ.Զոհրաբյան